

# ՆԵՐԿԱՅ՝ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

Գայիանե Գեորգեան

Հայերէնի խոնարհման համակարգը պատմական զարգացման ընթացքում ենթարկուել է նշանակալից փոփոխութիւնների: Փոխուել են եղանակների ու ժամանակների քանակը (գրաբարի որոշ ժամանակաձեւեր վերացել են՝ իրենց տեղը զիջելով նորակազմ բայական միաւորներին), յարացուցային կազմութիւնների կառուցուածքը, բայի քերականական իմաստների դրսեւորման միջոցները: Տիպաբանական տեսակէտից կարեւորւում է ներկայ>ապառնի ժամանակային անցումը:

Յայտնի է, որ գրաբարն ունեցել է երեք եղանակ՝ սահմանական, հրամայական եւ ստորադասական: Մատենադիտական վկայութիւնները փաստում են, որ ստորադասական ներկայի կամ ապառնի իմաստով գործածուել է սահմանական ներկան, իսկ սահմանական անցեալ անկատարը, ստորադասականի համապատասխան ժամանակի բացակայութեան պատճառով, կիրառուել է նրա փոխարէն: Ստորադասական եղանակի ժամանակաձեւերի իմաստագործառական անորոշութիւնը եւ դրանց փոխարէն ներկայ եւ անցեալ անկատար ժամանակի իմաստներն արտայայտող կազմութիւնների յաճախադէպ կիրառութիւնները պատճառ են դարձել ստորադասական եղանակների կազմութիւնների գործառական սահմանափակման եւ աստիճանական անհետացման: Յիշեալ ժամանակաձեւերը լեզուական երեւոյթները պարզեցնելու բնականոն օրինաչափութեամբ վերածել են այլ եղանակաձեւերի՝ ըզձական ապառնի եւ անցեալի: Այս ամենը ուղեկցուել է նաեւ քերականական իմաստների փոփոխմամբ. գրաբարի սահ-

մանական ներկայի եւ անցեալ անկատարի ձեւերը, կորցնելով ժամանակային հիմնական իմաստները, ձեռք են բերել ըզձական եղանակի ժամանակաձեւերի գործառոյթ: Դրա հետեւանքով առաջացել է անորոշութիւն. լեզուական միեւնոյն ձեւով արտայայտուել է քերականական մի քանի իմաստ՝ ներկայի եւ անցեալ անկատարի, ըզձական ապառնի եւ անցեալի ապառնի: Հ. Աճառեանը կարծում է, որ «այս խառնակութեան առաջն առնելու եւ լեզուի գոնէ երկու հիմնական եղանակները իրարից զանազանելու համար հնարուեց կու մասնիկը»<sup>1</sup>:

Հաւանաբար յիշեալ կազմութիւնների գործառական բազմաթէքութիւնը վերացնելու նպատակով ներկայի եւ անցեալ անկատարի նոր կառուցատիպերը կազմուել են ոչ թէ կու եղանականիշ մասնիկով եւ դիմաւոր բայով, այլ նախդրիւ անորոշ դերբայով եւ օժանդակ բայով բաղադրուած զուգորդութիւններով: Այս վարկածը կարելի է հիմնաւորել ներքոբերեալ փաստարկներով:

1. Յայտնի է, որ գրաբարում անորոշ դերբայի ներգոյական հոլովի իմաստն արտայայտուում էր հայցական հոլովի եւ ի նախդրի յարադրութեամբ: Եւ քանի որ սահմանական ներկան եւ անցեալ անկատարը գործողութեան մէջ լինելու գաղափար են արտայայտում, հետեւաբար անորոշ դերբայի նախդրիւ հայցականը, ներգոյականի իմաստ ունենալով, կարող էր

1 Հ. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի համեմատութեամբ* 562 լեզուների, հտ. 4 գիրք Ա, Երեւան, 1959, էջ 389:

արտայայտել ներկայ եւ անցեալ անկատար ժամանակների իմաստները: Վերոյիշեալ բայաձեւերը, Մ. Աբեղեանի կարծիքով, կարող էին կիրառուել սահմանական եղանակի ներկայի եւ անցեալ անկատարի ժամանակաձեւերի իմաստներով, քանի որ ցոյց են տալիս կատարուող կերպի այնպիսի գործողութիւն, որի մէջ յարակայում է ենթակա: Դրանք, հին դարերում սակաւ գործածութիւն ունենալով, յետագայում աւելի յաճախ են կիրառուում սահմանական ներկայի նշանակութեամբ<sup>2</sup>:

2. Անորոշով ներկայի եւ անցեալ անկատարի կազմութիւնները մատենագրութեամբ աւանդուած են դեռեւս գրաբարի շրջանից.

ա) Հ. Աճառեանը նշում է անորոշ դերբայով կազմուած անցեալ անկատարի ձեւեր, որոնք աւանդուած են 5-րդ դարից՝ «Ետ ում տալ էր զօրէնսն» (տուեց ում տալիս էր կամ տալու էր օրէնքը) Բուզ., 23, «Ընդ որ գալ էր» (որով գալիս էր կամ գալիս էին) Բուզ., 250<sup>3</sup>: Յիշեալ օրինակները ենթադրել են տալիս համապատասխան ներկայի գոյութիւնը նոյն ժամանակաշրջանում:

բ) Անորոշով ներկայի առաջին օրինակները հանդիպում են՝ սկսած 7-րդ դարից: Այս մասին վկայում է Ա. Այտընեանը՝ բերելով հետեւեալ օրինակները՝ յոյնք են ի գալ ի վերայ մեր (է դար), վրանիս կու գան. Դուք զտաճարն այլ յայրել էք ի տալ (է դար), տաճարն այլ այրել կու տաք<sup>4</sup>:

գ) Հ. Ղ. Յովնանեանը, ուսումնասիրելով միջին հայերէնի գրաւոր նիւթերը, անորոշով ներկայի բազմաթիւ օրինակներ է նշում Վարդան Արեւելցու «Պատմութիւն տիեզերական» եւ Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն թաթարաց» աշխատանքներում: Նա Արեւելցու մօտ — ում վերջամասնիկով անկատար դերբայի մեկ օրինակ է վկայում՝ յաւելելով, որ նրա լեզուում ի նախդրով անորոշի եւ օժանդակ բայի յարադրութիւնները հաստատական ներկայի հիմնական ձեւերն են<sup>5</sup>:

3. Միջին հայերէնի շրջանում, ըստ մատենագիտական վկայութիւնների, ներկայի եւ անցեալ անկատարի՝ ժխտական խոնարհման ժամանակաձեւերը կազմուել են անորոշ դերբայով: Ա. Աբրահամեանը նկատել է, որ անորոշով ժխտական ձեւերի ամենավաղ գործածութեան օրինակներ կան Շապուհ Բագրատունու մօտ (10-րդ դար). «Եւ երբ հասան ի ջուրն . . . ասեն. «իշխան Դերեն, չէնք աղէկ ի տեսանել զբանակն նոցա, զի կարի ամպոխ են, չէ պարտ այս աւր գնալ մեզ առ նոսայ, դարձիր որ երթանք ի Կոտորոց ամրոցն մեր»<sup>6</sup>:

Վերոբերեալից ենթադրուում է ներկայի եւ անցեալ անկատարի՝ դրական խոնարհման համանման կազմութեամբ ժամանակաձեւերի գործառութիւնը, որից հետեւում է, որ յիշեալ ժամանակաձեւերը ժամանակագրական առումով նախորդել են միւս կառուցատիպերին:

4. Անորոշով ներկայի եւ անցեալ անկատարի նախնական վիճակն են ներկայացնում բարբառային մի շարք միաւորներում առկայ միավանկ գալ, լալ, տալ

2 Մ. Աբեղեան, Հայոց լեզուի տեսութիւն, Երեւան, 1965, էջ 313:

3 Հ. Աճառեան, Լիակատար քերականութիւն հայոց լեզուի համեմատութեամբ 562 լեզուների, Խ. 4 գիրք Բ, Երեւան, 1961, էջ 174:

4 Տե՛ս Հ. Ա. Այտընեան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, էջ 87:

5 Տե՛ս Հ. Ղ. Յովնանեան, Հետազոտութիւնք նախնեաց ուսմկօրէնի վրայ, Վիեննա, 1897, էջ 254-255:

6 Ա. Աբրահամեան, Հայերէնի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակութիւնը, Երեւան, 1953, էջ 241:

բայերի ներկայ եւ անցեալ ժամանակաձեւերի դրական (ի գալ եմ, ի լալ եմ, ի տալ եմ) եւ ժխտական կազմութիւնները (չեմ ի գալ, չեմ ի տալ, չեմ ի լալ):

Այսպիսով, եթէ նկատի ունենանք, որ անորոշով ներկայ եւ անցեալ անկատար ժամանակաձեւերի առաջին վկայութիւնները հասնում են մինչեւ 7-րդ դար, դրանց նախատիպերը առկայ են դեռեւս մեր մատենագրութեան սկզբնաւորման շրջանում, ժխտական կազմութիւնները գործառուում են՝ 10-րդ դարից սկսած, մինչդեռ ներկայի եւ անցեալ անկատարի՝ «կու» եղանականիշ մասնիկով եւ «-ում» վերջամասնիկն ունեցող դերբայով բաղադրուած առաջին օրինակները մատենագրութեան մէջ գործառուում են՝ 12-րդ դարից սկսած, ապա կարելի է ենթադրել, որ անորոշ դերբայով եւ օժանդակ բայով կառուցատիպերը նորակազմ ներկայի եւ անցեալ անկատարի նախնական ձեւերն են եղել եւ սկսել են կիրառուել այն ժամանակ, երբ գրաբարի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակաձեւերի՝ ստորադասականի իմաստով հետզհետէ յաճախացող գործառութիւնների հետեւանքով ստեղծուել են նոր կազմութիւններ: Հաւանաբար նորակազմ անորոշով ներկայի եւ անցեալ անկատարի ձեւատիպարները նախապէս, երբ արդի բարբառների քերականական առանձնայատկութիւնները դեռ նոր էին սկսում գծագրուել, ընդգրկել են հայերէնի ողջ տարածքը՝ գործառուելով գրաբարեան ներկային եւ անցեալ անկատարին զուգահեռ: Յետագայում միայն՝ 12-րդ դարից սկսած, հին շրջանում գոյութիւն ունեցող բարբառային տարբերութիւնների խորացմանը զուգընթաց ստեղծուել են նորակազմ կառուցատիպեր, իսկ անորոշով ներկայ եւ անցեալ անկատարը կենտրոնացել են արեւելեան տարածքի բարբառային միաւորների մի մասում: Այս գործընթացին թերեւս նպաստել է այն, որ յիշեալ ժամանակաձեւերը

եւս ժամանակի ընթացքում ձեռք են բերել բազմիմաստութիւն (այդ եւ վկայում բարբառային որոշ միաւորներում անորոշով կազմութիւնների կիրառութիւնը ապառնի իմաստով), հետեւաբար չի լուծուել ներկայի եւ անցեալ անկատարի իմաստագործական բազմարժէքութեան յաղթահարման հարցը, եւ դարձեալ առաջացել է դրանց ձեւաբանական տարբերակման խնդիրը: Միայն ներկայի եւ անցեալ անկատարի իմաստներն արտայայտող կաղապարային կառոյցներ ունենալու, բայական միաւորների բովանդակութեան պլանում յստակութիւն մտցնելու միտմամբ հայերէնի տարածքային տարբերակները դիմել են նոր միջոցի՝ գործառուելով «կու» եղանականիշ մասնիկով եւ դիմաւոր բայաձեւերով համադրուած զուգորդութիւնները:

Հայագիտութեան մէջ «կու» եղանականիշ մասնիկի ծագման վերաբերեալ տարբեր կարծիքներ են արտայայտուել: Քննելով կու-ի ծագման հարցը՝ Գ. Զահուկեանը հաւանական է համարում Մ. Աբեղեանի տեսակէտը, քանի որ նախ՝ Հ. Ա. Այտընեանը հաշուի չի առնում որոշ վայրերում «կու»-ի հաւաստիութեան ապառնի արտայայտելը, իսկ դա դժուար է բացատրել «կայ ու» կապակցութեամբ. «...երկրորդ՝ լեհահայ խօսուածքում (Առտէալի բարբառ) եւ Բասարգեչարում «կու»-ի դիմաց առկայ է «կի» ձեւը, որ անհնար է հնչիւնապէս բխեցնել «կայ ու»-ից կամ «կու»-ից, բայց դժուար է բխեցնել «կոյ»-ից»<sup>7</sup>:

Այս խնդրին անդրադառնալիս հաւանաբար պէտք է հաշուի առնել, որ հայերէնի բարբառների ծաւալուն տարածքում սահմանական ներկայի եւ անցեալ անկատարի մասնիկները նախնական մեկ ձեւից չէին կարող առաջանալ: Հնչիւնաբանօրէն արդարացւում է ոչ միայն «կոյ»-

7 Գ. Զահուկեան, Հայ բարբառագիտութեանն ընդհանուր տեսակետ, Երեւան, 1972, էջ 104:

9 Ա. Խաչատրեան, Աճառեանը եւ հայ բարբառագիտութիւնը,- Հայերէնի բարբառագիտական ատլաս, պրակ 1, Երեւան, 1982, էջ 47:

խօսիր, խօսէր... (ՀԲԱՆ, Լոռի, Դսեղ, 135)<sup>12</sup>: Թերեւս անցեալ անկատարում դեր-բայական ձեւերի գործածութիւնը ներկայի կազմութիւնների համաբանութեան եւ գրական լեզուի ազդեցութեան արդիւնք է, իսկ գրաբարեան անցեալ անկատարի պահպանումը Դ.Կոստանդեանը բացատրում է գրաբարի անցեալ անկատարի՝ ըղձական անցեալի իմաստով կիրառութեամբ<sup>13</sup>: Մեր կարծիքով եւս այդ կիրառութիւնը յանգեցրել է նրան, որ անցեալ անկատարի համար ստեղծուել են նոր կաղապարներ, իսկ անցեալ անկատարի ձեւերը դրսեւորել են միայն ըղձական եղանակի անցեալի իմաստ: Այս երեւոյթը հաւանաբար ընդգրկել է հայերէնի ողջ տարածքը՝ բացառելով միայն գրաբարատիպ անցեալ անկատարով բարբառային միաւորները, որոնցում բայական յիշեալ ձեւերի զարգացումը ընթացել է այլ կերպ: Դրանք ըղձական անցեալի համար են ստեղծել նոր ձեւեր՝ պահպանելով գրաբարատիպ անցեալ անկատարը՝ որպէս սահմանական եղանակի ժամանակաձեւ:

Արեւմտեան խմբակցութեան բարբառների մի հատուածում (Քեսաբ-Սուեդիայի, Բէյլանի, Սեբաստիայի, Ասլանբեկի, Եդեսիայի, Համզենի (Մալայ, Ջեֆանոս) բարբառներ, Շապին-կարահիսարի, Պոլսի, Սէօլէօզի միջբարբառներ) ներկայի եւ անցեալ անկատարի մեկ այլ իմաստի՝ շարունակականի համար են ստեղծուել կաղապարային կառոյցներ՝ գրաբարի ներկայ ու անցեալ անկատար ժամանակաձեւերի եւ «կոր, էր, դար, ունի/գունի, հայէ, հայկակ» մասնիկների զուգորդութեամբ: Վերջիններս թերեւս առաջացել են ներկայի համար առանձին ձեւատիպարներ ունենալու միտ-

մամբ: Այս տեսակէտից մօտենալով հարցին՝ կարելի է առաջ քաշել այն կանխադրոյթը, թէ արդի հայերէնի բոլոր դրսեւորումներում առկայ ներկայ ժամանակի ձեւերը իրենց առաջացման ամենախնական փուլում ունեցել են միայն շարունակականի իմաստ: Յետագայում է, որ դրանք ընդլայնել են գործառութեան սահմանները՝ ձեռք բերելով ներկայի միւս (մասնաւորապէս՝ ընդհանրական ներկայի) իմաստները: Ասուածը հիմնաւորւում է այն փաստարկով, որ մի շարք բարբառներում սկզբնապէս ակնյայտօրէն միայն շարունակականի իմաստ արտայայտող ձեւերը, ինչպէս ստորեւ կը տեսնենք, զարգացման վերջին շրջանում ձեռք են բերել նաեւ ընդհանրական ներկայի իմաստ:

Ներկայի եւ անցեալ անկատարի նորակազմ ձեւերի առաջացմամբ չի լուծուել ներկայ եւ ապառնի ժամանակաձեւերի տարբերակման խնդիրը. «կու»ով կազմութիւնները բազմիմաստ էին, եւ սահմանականի ներկան, անցեալ անկատարն ու ապառնին տարբերակուած արտայայտաձեւեր չունէին: Յետագայում այս գործածութիւնը պահպանուել է միայն արեւմտեան տարածքում, իսկ արեւելեան խմբակցութեան բարբառային միաւորները, ինչպէս ասուեց, ներկայի եւ անցեալ անկատարի համար ստեղծելով նոր ձեւեր, «կու» եղանակիչ մասնիկով զուգորդուած բայաձեւերով արտայայտել են ապառնի իմաստ: Աւելի ուշ ապառնի յարացոյցում սկսել է գործառուել պիտի եղանակիչ մասնիկով զուգորդուած կաղապարային կառոյցը՝ «կու» մասնիկով ձեւերի իմաստագործառական անորոշութիւնը վերացնելու միտմամբ: Այս մասին Հ. Աճառեանը գրում է. «Ամեն լեզուի մէջ էլ ներկան կարող է իբրեւ ապառնի գործածուել: Սակայն այն բոլոր լեզուներում, ուր ներկան իբրեւ ապառնի է գործածուում, կայ յատուկ եւ առանձին ապառնի: Գրաբարի ապառնին ջնջուելուց յետոյ միջին հայե-

12 Ա. Ղարիբեան, Հայ բարբառագիտութիւն, էջ 178:

13 Տե՛ս Դ. Կոստանդեան, Խոսքի բարբառային իրադատութիւնների լեզուաաշխարհագրական բնութագիրը, Հայերէնի բարբառագիտական ատլաս, Երեւան, 1985, պրակ 2, էջ 58:

րէնը առանձին ապառնիից զուրկ մնաց: Անպատեհութիւնը վերացնելու համար անհրաժեշտ էր ուրեմն կամ առանձին ապառնի ստեղծել կամ նոր ներկայ հնարել: Առաջին միջոցին դիմեցին արեւմուտքի հայերը, որոնք ստեղծեցին պիտի ձեւով ապառնի եւ ներկայի համար հաստատ պահեցին «կը» ձեւը: Երկրորդ միջոցին դիմեցին արեւելքի հայերը, որոնք ներկայի համար հնարեցին «ու» ձեւը՝ պահելով «կը» ձեւը ապառնիի համար, իսկ «պիտի» ձեւը՝ պարտաւորականի համար»<sup>14</sup>:

Վերոնշեալից հետեւում է, որ «կու» եղանակիչ մասնիկով կազմուած ապառնի ժամանակաձեւի զարգացումը արեւելեան եւ արեւմտեան խմբակցութիւններում տարբեր ընթացք է ունեցել: Արեւելեան խմբակցութիւնում այն շարունակել է գործածուել ապառնիի իմաստով, իսկ արեւմտեանում «պիտի» եղանականիչ մասնիկով բաղադրուած կազմութիւնն է արտայայտել այդ իմաստը. «Կայուն կազմութեամբ ապառնին ձեւաւորուել է միայն նոր հայերէնում: Արեւելահայերէնը ապառնին կազմում է ըզձականին նախորդող «կու» մասնիկի օգնութեամբ: Նոր արեւմտահայերէնում, սակայն, հաստատուում է արդէն միջին հայերէնում առկայ «պիտի»+ ստորադասականի ներկայ» կապակցութիւնը...: Յարաբերակցութիւնը պահպանելու համար, սակայն, նոր հայերէնում բացակայում է «կու» մասնիկով սահմանական եղանակի ձեւը...»<sup>15</sup>: Թերեւս աւելի հաւանական է կարծել, որ արեւելեան խմբակցութիւնում «կու» եղանականիչ մասնիկով կազմուած ներկայի բացակայութիւնը ոչ թէ յարաբերակցութիւնը պահպանելու համար է, այլ «կու»

եղանականիչով կազմութիւնների բազմիմաստութիւնը վերացնելու ուղիներից մեկը այնպէս, ինչպէս արեւմտեանում «պիտի» եղանականիչ մասնիկով կառուցատիպերի գործածութիւնը:

Ըստ Հ. Աճառեանի՝ «պիտի»ն նախապէս եղել է անդէմ բայ եւ ունեցել է «պէտք է» իմաստը: Յետագայում այն, ձեռք բերելով բայական նշանակութիւն, խոնարհուել է՝ ներկայ՝ «պիտի», անցեալ անկատար՝ «պիտէր», կատարեալ՝ «պիտեցաւ»: Վերջիններս գործառուում են՝ սկսած 12-րդ դարից, ինչպէս՝ Բարի պիտի թուել, Պիտէր երդուիլ, Գրել պիտէր: Աւելի ուշ պիտէր ձեւը դառնում է պիտիր՝ առաջին վանկի ի ձայնաւորի համաբանութեամբ, իսկ յետոյ ստանում է «պիտի» ձեւը եւ սկսում է գործածուել ներկայի եւ անցեալի բոլոր դէմքերի հետ<sup>16</sup>: Վերոնշեալ տեսակէտը հաստատուում է բարբառային փաստերով: Պիտիմ բայից «պիտի» եղանականիչ մասնիկի առաջացման ու նրա պատմական զարգացման ընթացքը ցոյց տուող բազմաթիւ օրինակներ կան բարբառներում:

«Պիտի» եղանականիչ մասնիկով գոլգորդուած բայաձեւերի գործածութիւնը բարբառների արեւմտեան եւ արեւելեան խմբակցութիւններում զարգացման տարբեր ընթացք է ունեցել: Եթէ արեւմտեան խմբակցութեան բարբառների մեծ մասում դրանք արտայայտում են սահմանական եւ հարկադրական ապառնիների իմաստ, ապա արեւելեան խմբակցութեան բարբառներում (բացառութեամբ Լոռու, Շամշադին-Դիլիջանի խօսուածքների) այդ բայաձեւերը միարժէք են, գործառականօրէն ծանրաբեռնուած չեն եւ միայն հարկադրական ապառնիի ու անցեալի իմաստներով են գործածուում: Հաւանաբար «պիտի»ով ձեւերի գործածութիւնը ապառնիի իմաստով նախապէս բնորոշ է եղել արեւմ-

14 Հ. Աճառեան, Լիակատար քերականութիւն հայոց լեզուի համեմատութեամբ 562 լեզուների, հ. 4, գիրք Բ, էջ 173:

15 Յ. Կարստ, Կիլիկեան հայերէնի պատմական քերականութիւն, Երեւան, 2002, էջ 288:

տեան խմբակցութեան բարբառներին, որոնցում ապառնիութեան իմաստը դրսեւորման առանձին ձեւ չի ունեցել:

Այսպիսով, ինչպէս վերոբերեալից պարզ դարձաւ, Հայերէնում ներկայ>ապառնի ժամանակային անցումը կատարուել է մի քանի անգամ: Նախ գրաբարի ներկայ եւ անցեալ անկատար ժամանակաձեւերի՝ ստորադասական եղանակների իմաստով յաճախացող գործածութիւնների հետեւանքով դրանք սկսել են արտայայտել ըղձական եղանակաձեւերի իմաստ, եւ կատարուել է ներկայ>ապառնի ժամանակային առաջին անցումը: Այնուհետեւ, ինչպէս վկայում են մատենագիտական աղբիւրները, սկսել են գործածուել անորոշ դերբայով եւ օժանդակ բայով յարադրութիւնները, որոնք գրաբարեան ներկայի նման ձեռք են բերել ապառնիի իմաստ, այսինքն՝ կատարուել է ներկայ>ապառնի ժամանակային յաջորդ անցումը: Այս դէպքում ներկայ եւ ապառնի ժամանակաձեւերի տարբերակման համար սկսել են գործածուել ներկայի նորակազմ ձեւեր՝ «կու» մասնիկով եւ գրաբարեան ներկայի բայաձեւերով յարադրուած: Սակայն «կու»ով կազմութիւնները բազմիմաստ էին, եւ սահմանական ներկան ու ապառնին տարբերակուած արտայայտաձեւեր չունէին: Յետա-

գայում այս գործածութիւնը պահպանուել է միայն արեւմտեան խմբակցութեան բարբառներում եւ արեւմտահայ գրական լեզուում, իսկ արեւելեան խմբակցութեան բարբառային միաւորները եւ արեւելահայ գրական լեզուն, ներկայի համար ստեղծելով նոր ձեւեր, «կու» եղանականիշ մասնիկով բաղադրուած բայաձեւերով արտայայտել են ապառնիի իմաստ: Աւելի ուշ ապառնիի յարացոյցում սկսել է գործառնել պիտի եղանականիշով յարադրուած կառույցը՝ «կը» մասնիկով բաղադրուած կազմութիւնների իմաստագործառական անորոշութիւնը վերացնելու համար:

Նկատելի է, որ Հայերէնում ներկայ>ապառնի ժամանակային անցումը ունեցել է հետեւողականօրէն արտայայտուած մի շարք յաջորդական փուլեր: Նախ ներկայի նորակազմ կառույցները արտայայտել են խօսելու պահին կատարուող գործողութեան իմաստ, այսինքն՝ դրանք նախապէս արտայայտել են շարունակական ներկայի իմաստ, այնուհետեւ ձեռք են բերել նաեւ ընդհանրական ներկայի իմաստ: Աւելի ուշ դրանց գումարուել է ապառնիի իմաստը: Այս բազմիմաստութիւնը պատճառ է դարձել ներկայի նոր ձեւերի ստեղծման, որոնք անցել են զարգացման միեւնոյն ուղին: